



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 377-Ա/2,

13.04.2017թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ)
ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 552-Ա/2 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի
2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 973-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի
ապրիլի 5-ի N 338-Ա/2 հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական
ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով
վերապատրաստումներ իրականացնելու համար երաշխավորել հետևյալ
կազմակերպություններին.

- 1) «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
- 2) Ուսուցման ազգային հիմնադրամ
- 3) «Մաստեր Սթայլ» ՍՊԸ

4) «Հույս և ապագա» ՀԿ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 26-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին երաշխավորելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի N 907-Ա/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 552-Ա/2 հրամանը:

3. Հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա. Բաղդասարյանին՝ պաշտոնապես հրապարակել երաշխավորված կազմակերպությունների ցանկը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ